Արձանագրություն N 3

ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/15 ծածկագրով վարչական սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05.12.2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բարսեղյան
Հանձնաժողովի անդամներ՝ Շ. Իսախանյան
Լ. Սարիբեկյան
Հ. Բաղինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Լ. Խալաթովա

1. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/15 ծածկագրով գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Կ. Բարսեղյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 21.11.2019թ.

ա) հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ:

բ) ծանուցվել էր յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում ներկայացվել են:

1.2 Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի 28.11.2019թ. նիստին արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- 4-րդ չափաբաժնի մասով <<ՊՈՌ Ինվեստ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրում նշված օպերատիվ հիշողությունը 128 ՄԲ է՝ հրավերով սահմանված 256 ՄԲ-ի փոխարեն, իսկ պատճենահանման արագությունը՝ 22-29 էջ/ր է՝ հրավերով նախատեսված 25 էջ/ր փոխարեն:

- 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով՝ <<Էդմոնդ Ասատրյան Վիրաբի>> ԱՁ-ի կողմից չի նշվել հրավերով պահանջվող սպասարկման կենտրոնի հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը:

1.3 Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 28.11.2019թ. ծանուցվել է նշված մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում արվել է վերջիններիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/15 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Կ. Բարսեղյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ներքոնշյալ չափաբաժիններում ընտրված մասնակից ճանաչել

չափաբաժին 4 - <<ՊՌՈ Ինվեստ>> ՍՊԸ-ին,

չափաբաժիններ 5 և 6 - <<Էդմոնդ Ասատրյան Վիրաբի>> ԱՁ-ին,

չափաբաժին 7 - <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ին,

չափաբաժիններ 8 և 9 - <<ՄԵՐԿԱԴՈ>> ՍՊԸ-ին,

չափաբաժիններ 10, 11 և 13 - <<Բլոքչեյնհոսթ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագրեր կնքելու որոշում ընդունելու մասին

(Կ. Բարսեղյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Կ. Բարսեղյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագրեր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Կ. Բարսեղյան

Անդամ՝ ---------- Շ. Իսախանյան

---------- Լ. Սարիբեկյան

---------- Հ. Բաղինյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան